

ՊԵՏՐՈՎՊՈԼԻՆԻ ԶԱՄԱՐՈՒՐ

Այդ հանդէսին կողմէն համարը հրատարակելու և բոլորովին տարբեր բովանդակութեամբ և ուղղութեամբ :

Ձեռքովն, գործիչներէն մին՝ Պ. Ազատի, նախաջողուած մը ունի հոն, որով կառավարիչ, իբր 12 տարուան փորձուած յեղափոխական, (sic) Մեր Ուղիին փոխել, վերջ ապա յեղափոխութեան, յեղափոխական գանձարաններէն բոլոր գանձերը առնել և միմիայն ուժ տալ որոնքն ու հայ աղքատ երիտասարդները դաստիարակելու, կրթելու գործին. և ահա այդպէսով ապագային համար կը պատրաստուի գլխաւոր սերունդը մը որ և պիտի ազատէ մեր ազգը :

Պ. Ազատի, իր ըսածներուն աւելի ուժ տալու համար, կը յայտարարէ թէ ինքը անձնազոհութենէ խուսափելու համար չէ որ այդ առաջարկը կընէ, և ամէն ժամ պատրաստ է իր անձը գոհել, ու իր ներկայ ըսածները միայն դառն փորձի և իրականութեան արդի նշքն են :

Նախ ըսենք որ Պ. Ազատի ի վաղուց անտի դադարած է հայ ազգին վրայ մտածել է. առ կը փաստեն հինգ վեց տարի առաջ իր գրած նամակները որոնց նմուշները Դրօշակը հրատարակեց իր յաւելումներն մէջ :

Երկրորդ՝ Պ. Ազատի ինչո՞վ կ'ընայ երախտաւորել թէ հայու հաշուին ուսում առած երիտասարդները ուսումը ստանալէն յետոյ, անպատճառ պիտի ազգին համար աշխատին: Մենք բնական կառակը համոզուած ենք որ ատոնց շատ չնչին տոկոսը իր ապագան շրտկելէն յետոյ, պիտի մտածէ հայ ժողովրդի մասին :

Պ. Ազատին իր անձը գոհելէ չի վախ-

նալը մէջ տեղ նետելով քիչ մի դերասանութիւն կընէ. որովհետեւ ըստ իր համոզման ներկայիս իր անձը, ինչպէս և ոչ մէկու մը անձը, գոհելու պէտքը չի գտնուիր. իսկ այդ 12 տարուան փորձուած և երեւի քաղաքագէտ գործիչին երազած ապագան այնքան հեռու է որ իրեն ոսկրները կամ փթած պիտի ըլլան, կամ թէ ինք այնքան զառամած պիտի ըլլայ, որ տեղէն չի պիտի կրնայ շարժիլ :

Ազատիին երգը հին է, շատ հին. վեց տարի շարունակ այդ երգը ամեն տեսակ բերան երգեց : Բայց Պ. Ազատի բերնին բողբոջին չի յարմարիր այդ երգը, որովհետեւ ան ամենալիրը սինքրութեամբ, մը հայ ազգը համեմատած էր իր ազոտոտ մարմին ամենաազոտոտ մասին չեռ :

Սորհուրդը կուտանք ժողովրդի Համարին մէջ աշխատողներուն, որոնք թուրքիոյ մէջ արդէն հարոտութիւն ունեցող մարդոց զաւակներ են կամ թէ աս ան չօրպածի մտաբանիկ սաներ, ու ժողովրդի հետ և ոչ մէկ կապ ունին. աշխատին իրապէս ժողովրդին համար գրել : Յիմար բանաստեղծութիւններով ապուշներն յատուկ Ուղիներ առաջարկելով, և թեթեւ գրականութիւն մը ստեղծելով՝ ժողովրդին համար չեն աշխատիր այլ իրենց հիւանդ ձգտումներուն յագուռդ կուտան :

ԿԵՏ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԸ

Սուլթան գլուխը երկար ու բարակ աս պատին, ան պատին զարկաւ որպէսզի միջոց մը գըտնայ չը զիջանիլ Փրանսայի, բայց

յաջողութիւն չունեցաւ : Ոչ ոք ուզեց օգնել Երևանը կարմիրին : Ասկէ վերջը ուզեց կրկին կերպով մը քաղաքական յարաբերութեանց մէջ մտնել Ֆրանսական կառավարութեան հետ, առաջը յաջողեցաւ :

Վերջի վերջոյ ուրիշ ճամբայ գտաւ. ուզողով յարաբերութեան մէջ մտաւ Ֆրանսացի պահանջատէրբուն հետ : Պ. Թիւպինի հետ արդէն համաձայնեցան են. սակայն Թիւպինի չը պիտի կրնայ խնդիրը գոցել մինչև որ Ֆրանսական կառավարութիւնը իր համաձայնութիւնը չըտայ : Իսկ աւելի մեծ պահանջատէրին, Լօրանսոյի խնդիրը զեռ առկախ մնացած է :

Ներքին կացութիւնը աւելի գէշ է թուրքիոյ մէջ. արաբները բացարձակապէս սպառնալից են :

Հայաստանի մէջ սեւ սեւ ամպերը կը կուտակուին : Պոլիս նոյն իսկ պետական խորհրդին մէջ, Շէյխի Իւլ Իսլամի որդին, առանց Պոլսէն վախչելու, ինչպէս ըրին շատ մը պաշտօններ, կը պախարակէ Սուլթանին բռնած ընթացքը, և կը յայտարարէ որ ինք պատրաստ է իր ըսածները Սուլթանին երեսին ըսել : Ամէն տեղ զինուորները անկարգութիւններ կընեն և բռնի կերպով

իրենց մնացած տնտեսականները կը պահանջեն : Եւ ահա Սուլթանը կը գալարի իր ոսկեզօծ որջին մէջ. ահա անները մերթ կը զրծտացնէ, մերթ կը սեղմէ ու ճիգեր կրնէ կրկին դիմադրաւելու այդ քաղաքական փոխորկներու որոնք կը պատրաստուին իր երկրին ու գահը փլուզել տակն ու վրայ ընելու Բայց միթէ՞ այդ ճիգերը կրնան յարատեւ ըլլալ, միթէ Սուլթան պիտի կրնայ և կասեցնել այն գատավճռին գործադրութիւնը զոր պատմական օրէնքները որոշած են թէ իրեն և թէ թուրքիոյ համար :

Ճիշդ է, Սուլթան և թուրքիոյ շատ գիմացան, շնորհիւ շահախնդ իր եւրոպացիներու. սակայն ամէն ինչ չափ ու սահման ունին ամէն գիմացիուն նիւթ և մարմին մաշուելու, ոչնչանալու ժամ մը, վայրկեան մը՝ ունին : Ահա նոյն ճակատագրական վայրեան է որ կը մտորիկնայ Սուլթանին, այսօր, վաղը, կամ քիչ մըն ալ ուշ, սակայն Սուլթանի ու թուրքիոյ մահաշունչ այդ վայրկեանը զարնելու վրայ է :

ԷՆ

ՔԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԺԱՐԱԾՆԵՐԸ

III

Իմ խօսքերին պատասխանող երիտասարդի լուեղաց յետոյ, հինգ վայրկեանի չափ լուծութիւն տիրեց. իմ գրութիւնը շատ փափուկ էր. քսա ներք աւելի երիտասարդներ գրեթէ բոլորն էլ գորգացած մարդիկ իրենց մտեղութիւնը օրգարացնում էին միմիայն նրանով, որ իրենք ոչ մի տեղեկութիւն չունին, և գործինախկին ղեկավարները թուլացել են : Ինչ ասէի ինչ պատասխանէի : Եւ իմ այդ անել վիճակից ինձ հանց մի ուրիշ երիտասարդ :

— Զարմանալի բաներ են ասում, Արշակ, կարծես թէ 20 տարեկան տղայ լինեն. յեղափոխական ուսուցչի պէտք են գտնում, հիմա, երբ 5—6 տարի շարունակ գործնական յեղափոխութեան մէջ են եղել : Հիտաբքիբ էի իմանալ թէ առաջին անգամ դու ինքդ, ինքնաբերաբար քեզ նուիրեցիր յեղափոխութեան ու կեանքդ վատագի ենթարկեցիր, թէ մէկը քո ականջից բռնեց և տարու գործի մէջ դրեց : Յեղափոխութեան ստաբեալները ամբոխի համար են հարկաւոր. նրա աչքերը, միտքը բանալու, սիրտը ոգեւորելու, նրա ազգային

ինքնաճանաչութիւնը զարթեցնելու համար. քեզ և մեզ նման մարդոց համար, որ գիտենք աշխարհի խէրն ու շառը, գիտենք գերութեան և ստրկութեան անպատարբեր լինելը, հասկանում ենք ազգային ազատութեան արժէքը նշանակութիւնը ըմբռնում ենք անհատի դէպի իր ժողովուրդը ունեցած պարտականութիւնը, յեղափոխական քարոզչի, յեղափոխական թերթի ինչ անհրաժեշտութիւն կայ : Աւելի լաւ չէ՞ անկեղծ լինելք. աւելի լաւ չէ՞ առանց մեղքը ուրիշ վրա բարդելու յայտարարելք թէ մենք է որ այլևս յեղափոխական ներ չենք :

Հարապատ յեղափոխականի համար ինչ կարեւորութիւն ունի թէ իր այսինչ կամ այնինչ ընկերը զարգալի է գործելուց իր հանգստութեան ետեւից է ընկել : Հարազատ յեղափոխականը իր այդ տեսակ ընկերներին սրտի յաւով միայն արհամարհել կախի էլ նրա հետ գործ չի ունենալ և կը շարունակի իր գործը :

— Ձէ, այդպէս չէ մէջ մտաւ մի երրորդը. որչափ որ էլ մենք գիտակից և հասկացող մարդիկ լինենք, այնու ամենայնիւ մենք բոլորս մի առանձին յարգանքով և վստահութեամբ ենք վերաբերվել դէպի այն մարդիկը, որոնք մեզինց առաջ են մտել այդ փոտ ասպարէզը : Մենք անուղղակի կերպով, միշտ այդ տեսակներէն ենք առաջնորդվել : Եւ այսօր յանկարծ տեսնում ենք որ այդ մարդիկն են կ'նգ առնողը : Ճիշդ է կարող են նրանք յոգնած լինել, բայց կարող քն

և համոզված լինել թէ՛ հայկական յեղափոխութիւնը ոչ մի արդիւնաւէտ հետեւանք չի կարող ունենալ, նրանք եթէ իրենք յոգնել են և այլևս իրենց անպէտք են գտնում այդ գործի համար թող անկեղծութիւնը եւ աղնութեանը ունենան յայտարարելու և բողբոջին եւ քաջվելու : Եթէ չեն յոգնել, այլ համոզուել են մեր շարժման անօգտակար լինան մէջ, թող այդ էլ յայտարարեն :

Ամէն պարագայի մէջ հեղինակուէր, այդ հեղինակութիւնը իրաւացի կամ իրաւացի լինելը մի կողմ թողնելը ընկերներին անորոշ, անբացատրելի զիրքը ճնշող եւ վհատեցնող տպաւորութիւն է թողում բոլոր այն յեղափոխականներին վրա, որոնք նրանց ամէն մի գործի աղբիւրը և զեկավարները են ճանաչել : Այդ չէքուքացած հեղինակութիւնը զիմաց պէտք է գոնէ գործն հեղինակութիւնը լինեն, որպէսզի ընդհանուր շուարուած հասարակութիւն Այդ տեսակներին էլ մենք չենք անսնում :

Ամբողջութեամբ մեր բոլոր խօսածները մեզ մօտիկ-կարեւոր գործիչները չեն գործում. ուրեմն այս կողմերում գործ չըկայ : Ո և է կենդանի գործի մասին ոչ մի բան չենք լսում երկրից, ուրեմն այնտեղ էլ գործ չըկայ : Յեղափոխական թերթեր չենք ստանում, ուրեմն կամ այդ թերթերն էլ չեն հրատարակվում, կամ թէ կազմակերպութիւնները այնքան կազմալուծված են, որ թերթը անգամ ժողովրդի մէջ տարածելու միջոց չեն կարողանում գտնել :

Այս բոլորը ապացուցանում են թէ՛ հայ ժողովրդի մէջ յեղափոխական գործունէութիւնը շատ թուլացել է, մեր կազմակերպութիւնները իրենց կոչման բարձրութեան վրա չեն գտնվում :

— Գուցէ կազմակերպութիւններ իրենց գործունէութեան ձեւն են փոխել անցեալ փորձերից դրդված. միջամտեցի ես :

— Ետտ կարելի է պատասխանեց խօսող երիտասարդը. կազմակերպութիւնները հիմա ցոյցեր չեն ուզում անել. համաձայն ենք և ուրախ : Ուղում են լուիկ միջոցի ժողովուրդը զինել. մեծ ոչ ստեղծելու և իսկական ապստամբութիւն առաջ բերելու համար : Այդ ուղումը շատ գնահատելի է. բայց հէնց այդ մեծ ծրագիրները իրագործելու համար աւելի եռանդուն ընդարձակ գործունէութիւն է հարկաւոր : Ուր է այդ գործունէութիւնը ուր են այն գործիչները որոնք այդ մեծ ծրագիրները պէտք է իրականացնեն :

Ահա այս բոլոր հարցերը շարեցնում են մեզ, շարեցնում են յեղափոխութեան համակարգներին : Պէտք է այդ շարունակ առաջն առնել, պէտք է գործերի դրութիւնը պարզել, և ահա այն ժամանակ մեր մէջ կրկին երեւան կը գան եռանդոտ և անձնէլը գործիչները, հակառակ պարագային շարունակ անտարբերութեան կը փոխվի—իսկ անտարբերութիւնը մեռելութեան :

ՎԱՐԴՈ

Վ Ե Ր Զ

ՌՈՒՍՉՈՒՔԻ ՀԱՅՈՑ ՎԱՐՓԱՐԱՆՆԵՐԸ

Նորեկ մըն եմ քաղաքին մէջ. ա մէն ինչ հետաքրքրութիւնս շարժեց, մանաւանդ մեր վարժարանները: Շատ բաներ լսեցի անոնց մասին, թեր ու գէտ խել մը կարծիքներ՝ որոնցմէ չը կրցայ հակառակ թափած ճիգերու՝ հզարակացութիւն մը հանել: Անցեալն, ուրեմն, մութին մէջ կը մնայ՝ ինծի համար: Սակայն, ներկային նկատմամբ կրնամ լուստես ըլլալ և աղուոր յոյսեր տածել: Երկուսն վարժարաններուն հոգաբարձուները, հինգ հոգի, հատուաբար ամբողջութիւն մը կը կազմեն. անոնք երեքը՝ տեղացի, երկուքը՝ Պոլսեցի են. առ հասարակ՝ հինգին համար լաւ կը խօսուի. վասնզի անոնք ձեռնհաս անձեր են, մասնաւորապէս՝ աստեղագետն ու աստղագիտը՝ որոնք նախկին սուրբիչներ ըլլալով՝ վարժարաններու նիւթակէն և բարոյական վիճակը կը հասկնան:

Նախորդ տարուան պարտքերը վճարելու եւ ներկայ տարեշրջանին պիտոճէն ապահովելու համար, նորընտիր հոգաբարձութիւնը, դպրոցասէր երիտասարդներէ բաղկացած կարգադիր մասնախմբի մը միջոցաւ, սարքել տուաւ թատերական ներկայացում մը՝ որ տեղի ունեցաւ անցեալ հինգշաբթի գիշեր, 30 օրոտոտս ի ներկայութեան իստեան բազմութեան մը: Թատերախաղը լաւ ընտրուած կտոր մըն էր, զոր հիանալիօրէն ներկայացուց Վ.Ս.Ե.Լ. իստեանը: Հակառակ իր շատ երկարութեան (ինչը արարուած), խաղը անոյշ տպաւորութիւն թողուց ներկաներուն վերայ:

Պ. Պ. Պէնչեան, ՊաՊայեան Շաքարեան սքանչելապէս կատարեցին իրենց դերերը. Պ. Պէնչեան՝ որ իսկատիպ քոմիկի խառնուածք ունի, շատ յաջող կերպով խաղաց իր ստանձնած լուրջ դերը: Պ. Պապայեան, իր յստակ արտասանութեամբ եւ վայելուչ շարժումներով, միշտ ուշադրութիւն կը գրաւէր. իսկ Պ. Շաքարեան կրցաւ լիութիւն արտայայտել նուրբ ու սիրահար երիտասարդի մը հոգեկան գրուելունը:

Կարգադիր մասնախումբը դրապէս եւ պատշաճօրէն զնահատեց այդ համեստ եւ միւր արուեստագէտները՝ նուիրելով անոնց երկու խորտակ ծաղկեփունջ եւ մէկ արծաթեղէն բաժակ: Կրտսի թէ 700 ֆրանքի գումար հասցի մըն է գոյացած՝ ներկայացումէն: Շիտակը, աղուորիկ ու կրտսի գումար մեր խեղճ դպրոցներուն համար:

Սեպտ. 12ին, պիտի բացուին վարժարանները: Ներկայ տարուան ուսուցչական մարմինը, մեծ մասամբ, նորերէ կը բաղկանայ, որոնցմէ զխառն օրներն են. Օր. Իսկուհի Նորիկեան, ձեռնհաս ձեռագէտ ուսուցչուհի, Պ. Պ. Մարտիրոս Սիմոնեան, Վասնայի Գիմնազիական Վ. Տափեան՝ կեդրոնականի, աւարտականներէն: Ստեփան Ապագայեան փորձառու ուսուցիչ:

Ինչպէս կ'երևայ, հոգաբարձութիւնը ուսուցչական յաջող ընտրութիւն մըն է բրած. իր տոած առաջին քայլէն ցոյց կուտայ թէ լիակատար գիտակցութիւնն ունի իր ստանձնած փափուկ պատճառին: Մաղթելի է որ անիկայ անվճատ գործ է, ականջ չը կարելով կարգ

մը ողորմելիներու կոկոնցներուն եւ ճղճիմ էակներու անձնական փոքուն շահերուն:

ԴԵՏ

ԻՕՂԱՆ ՄՕՍԴԻ ԶԵՐԲԱՎԱԼՈՒՄԸ

Անցեալ անգամ հաջորդեցինք որ Նիւ Եօրքի մէջ ձերբակալուեն «Կառավարութիւն» թերթի խմբագիր անիշխանական Իօհան Մօսղը: Զերբակալման պատճառը այն է որ «Կառավարութեան» սեպտ. 7ին (Ն. Տ.) հրատարակուած համարին մէջ յօդուածով մը Մակ-Բիւնիլիին սպաննուած փառարանուած է:

Մօսղ չը կրնալով 1000 սուլարի նրաշխաւորութիւն մը տալ, բանտը պիտի կենայ մինչեւ դատի ելլալը:

Իօհան Մօսղ Գերմանացի կատարի յեղափոխական մըն է և ժամանակին Գերմանիոյ մէջ կը վարէր «Պրոպագանդա» թերթը: Հին այդ թերթին մէջ հրատարակած իր կրակոտ յօդուածներու պատճառով քանի մը անգամ բանտարկութեան դատապարտուեցաւ, սակայն և ընկերակալականներու կողմէն աղագային ժողովին մէջ երեսփոխան ընտրուեցաւ ու այդ պաշտօնի մէջ մնաց 1874—1878ը:

Դիտարքին ընկերակալականներու դէմ հաստատած խիստ օրէնքները Մօսղը ստիպեցին Անգղիա երթալ, ուր ան հիմնեց «Պրոպագանդա» թերթը: Այդ թերթին մէջ ալ, գովաբանելով Յէքսսետր Բ.ին սպաննութիւնը, 18 ամսուան բանտարկութեան դատապարտուեցաւ:

Մօսղ 18 ամիս բանտը մնալէ վերջ ազատեցաւ և անցաւ Նիւ Եօրք, ուր կրկին նայն ուղղութեամբ շարունակեց «Պրոպագանդա» (ազատութիւն) թերթը, և հոն ալ քանի մը անգամ բանտարկուեցաւ: Կուսական տաղանդաւոր հրատարակիչ մըն է. թէեւ ինք մասնակից չէ Պրոֆֆալօրի մէջ կատարուած սպաննութեան, սակայն իր ձերբակալումը բաւականութիւն մըն է, հասարակած կարծիքին որ չսփազանց գրգռուած է անիշխանութեան բրորականիստներուն դէմ:

ԿՐՈՆԱԿԱՆ ՄԻԱՐԱՆՈՒԹԵԱՆՑ ՖՐԱՆՍԱՅԷՆ ՄԷԿՆՈՒՄԸ

ՃԻՉՎԻԹՆԵՐԸ

—(I)—

Կրօնական միարանութեանց ձրանսայէն մեկնումը կսկսի: Շարժութիւնները երեք օրուան երկար վիճարանութեանէ մը ետքը որոշեցին արտօնութիւն չխնդարելու Թրանսայէն մեկնելու, ուրիշ բան է եթէ Հոռովմէն յատուկ հրաման մը գայ: Նախ սեպտ. 20էն առաջ, պիտի մեկնին երկրին զանազան քաղաքներուն մէջ ընծայարան ունեցող հաստատութիւնները, ընծայարան չունեցողները, ու խտեալները, նորընծայները և ամենէն վերջը կրանտ-Շարժութեանցի եղբայրները: Յիշատակութեամբ 30ին Թրանսայի մէջ վանական որ և է կրօնաւոր չի պիտի մնայ, կրնալի ճիգու ճիգու թիւնները ընծայարանութեան հրատարակեց հայր Պիւրիշոնի մէջ յօդուածը, որ բնաւ տարակոյսի տակ չի թողուր ճիգու թիւններուն վերջնական որոշումը, որով արտօնութիւն պիտի չի խնդրեն: Հայր Պիւրիշոնի միաբանութեան իրեն անկէ ուղածը ընել զործելու կատարեալ անկախութեամբ. բայց ոչ ոք կը տարակուսի թէ ատոնց մէջ առաջուրէն նշանակուած միաբանութիւններ կան զոհուելու համար: Որոշեցին ատոնք, Մէկ հատ կայ թէ երկու, ինչպէս կը սեն լրագիրներէ ոմանք: Գաղտնիք մըն է, Բայց կրնանք ենթադրել թէ քանի որ երկուքէն մէկը պիտի զարնուի, անշուշտ ճիգու թիւններն են ատոնցմէ մէկը: Եթէ մէկ ըլլայ, անշուշտ մեզի համար է: Պրէսթի ճիգու թիւնները կը թողուն Նօթր-Ծամ տըր Պան-Սըրբուրի քոլէճը զոր կը վարէին Պրոֆանսի Էօտիսթիներու մեծաւորը: Հայր Լուիս իրենց վարժարաններու աշակերտաց ծընողքներուն շրջաբերական մը ուղղելով ծանայց վարժարանին փակուած և ըսաւ. — «Մեծ վիշտով պարտաւորուեցանք տալ այդ որոշումը: Այդ գործը մեզի համար շատ սիրելի էր զանազան տեսակէտներով. ամէն կերպով ջանացինք անոր պահպանումը ապահովել, այդ էր պատճառը որով ներկայ զեկոյցը յապաղեցաւ: Բանակցութիւնները յաջող ընելու համար մեր բոլոր ջանքերը ի գերեւ ելան», Բոնիթին-Եիք քահանաներն ալ կը փակեն իրենց հաստատութիւնները: Ռէտարմիտիսթիները, Վորէբի գործաւորներու Բըթիթ Սէօրբըր և Թոնչի Գարմէլիանները մեկնելու պատրաստութիւններ կը տեսնեն: Կըսուի թէ Սէնթ-Աննի ու Քէրկուանի Պէնէտիթիները մօտեցաւ պիտի հաստատուին Վալլէի դղեակին մէջ (Կամիւր-Պէլ-ճիքա): Վիսթի Պէնէտիթիներն ալ Պրէտա պիտի երթան (Հոլանտա): Արգէն անոնցմէ շատերը մեկնած են իրենց վանքէն և միւսներն ալ քիչ ատենէն անոնց պիտի հետեւին:

ՆԱՄԱԿ ԽՐԱԿՐՈՒԹԵԱՆ

Կը խնդրենք որ, ինչպատ տեղաւորս Ազգ. երկսն վարժարանաց արուած ներկայացման ներքակ հանուեցոյցը, հաճիք ձեր թերթին մատակարարելու մէջ հրատարակելու շնորհն ընել, որուն համար կը փութանք կանխել մեր շնորհակալիքը:

Մնած յարգանք
Ի գիմաց հոգաբարձութեան
Վ. Աստեղագիր Վ. Աստեղագետ
Մ. Պէտրիսկան Վ. Գոյալման

Հ Ա Շ Ո Ւ Ե Ց Ո Յ Ց

Ի Ապաս Ազգ երկսն վարժարանաց Տրուած քասերակսն ներկայացման 30 օգոստոս 1901 ին

ՄՈՒՏՐ

Table with 2 columns: Description and Amount. Includes 'Մատուած սոմակ ֆր. 870' and 'Նուէր զանազաններ 80'.

ԵԼՔ

Table with 2 columns: Description and Amount. Includes 'Վարձք թատրոնի ֆր. 20' and 'Վարձք նուագաւորներուն 39'.

Հոգաբարձութիւնս պարա կը համարի իւր անկեղծ շնորհակալիքն յայտնել կարգադիր մասնախմբի պատուարժան անդամներուն, որոնք բնաւ ջանք չը խնայեցին թէ ներկայացումը իրաւամբ շքեղ ընելու եւ թէ կարեւոր հասոյթով մը երկսն վարժարանաց սատարելու համար: Ի գիմաց հոգաբարձութեան Վ. Աստեղագիր Վ. Աստեղագետ Մ. Պէտրիսկան Վ. Գոյալման 4 սեպտ. 1901 Ռուսյուր

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Բարիզի հայ գաղթականութիւնը Թրանսայի արտաքին գործոց նախարար Տէլբասէին խնդրագիր մը մատուցեց է որպէս զի ան միջամտէ Չարին առջեւ հայոց վիճակն բարւոյցելու համար: Խնդրագրին մէջ ըսուած է որ Չարին մէկ խօսքը կը բաւէ հայերը ազատելու համար իրենց դժբաղդ կացութեանէն:

— Վերջերս Պոլսոյ մէջ մեռած յոյն բարերար Բուլի Սթէֆանովիչ կտակով 200 ոսկի նուիրեց է Պոլսոյ հայ Լուսաւորչական աղքատներուն:

Հայ հարուստները թող օրինակ առնեն յոյն հարուստէն և ամչնան:

— Պատրիարքը Մակ-Բիւնիլի մահուան առթիւ հեռագրաւ իր

յաւակցութիւնը յայտնեց ամե-
րիկեան զեւսպանին :

— Պատրիարքի ձախ որոնքի
վրայ պալատ մը ելեր է և բժշկա-
կան գործողութիւններ կատար-
ուեր են :

— Իտալիոյ Բատուա քաղաքի
համալսարանի ճարտարագիտու-
թեան ճիւղէն այս տարի առաջին
աստիճանի վկայագիր ստացող
152 երիտասարդներէն ամենա-
առաջինը հանդիսացած է պոլ-
սէցի Աւնճեան Յակոբ :

— Նպաստից յանձնաժողովի
կողմէն վարժարան մը բացուեր է
Մուշի Խուլթիկ գիւղին մէջ :

— Մուշի առաջնորդ Վահան
վարդապետ Մուրատեանի խորհր-
դանքին համեմատ գումար մը
զրկուեր է Մուշի կարօտեալնե-
րուն :

— Անգլիոյ Գլազգով քաղաքի
մէջ տեղի ունեցած «Խաղաղու-
թեան համաժողով» որոշեր է յի-
շատակագրով մը գիտել բոլոր
Եւրոպական պետութիւններուն
հայկական խնդիրը կարգադրե-
լու համար :

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Աւստրիոյ զեւսպանը Բ. Գրան
յիշատակագրով մը յայտարարեր
է՝ որ քանի մը ամիսէ ի վեր հաս-
տատուած է թէ թուրք փոստայի
պաշտօնեաները, փոստան Սելա-
նիքէն մինչեւ Սերպիոյ սահմա-
նագլուխը տարած միջոցին, ար-
ժէքաւոր պայուսակներ գողցած
են. զեւսպանը իր պատասխանա-
տու թուրք փոստային վարչու-
թիւնը կը ճանչնայ և կը յայտա-
րարէ թէ՛ Աւստրիական զեւսպա-
նութիւնը պիտի օգտուի փոս-
տան ապահովու լիբաւունքովը և
անհրաժեշտ միջոցները պիտի
ձեռք առնէ :

— Պիթիլիսի վալին Պօլիս հե-
ռագրած է թէ Մուշի մէջ կոտո-
րածներ չըկան :

— Պէլրաան Աւստրիական
թերթերուն կը հաղորդեն թէ՛
երիտասարդ թուրքերու կօմիթէն
Սերպիոյ կառավարութեանէն ար-
տօնութիւն խնդրած է միթիւնկ
մը կապել որուն մէջ պիտի խօ-
սուի նաեւ Մակեդոնիոյ և Հին
Սերպիոյ կացութեան մասին,
Այդ միթիւնկին Տամատ Մահմուտ
փաշան ալ ներկայ պիտի գտնուի :

Թ Ր Ա Ն Ս Վ Ա Լ

Ալէնպի գնդապետ Իհրափ-
րալի մէջ գերի բռնեց է Պրէ-
պէրա Պօէր հրամանատարը, 21
Պօէրներ և մեծաքանակ ռազ-
մամթերք ու պաշար :

— Իրէթօրեայէն կը հեռագ-
թէ Պօթա զօրավարը մտադիր է
Նաթալ արշաւել :

— Փէնէրալ Տուէզ և Օրանթի
նախագահ Շիթէյն մերժած են
ընդունել անձնատուր ըլլալու հա-
մար զիրենք համոզելու գացող
պատգամաւորութիւնը :

Չ Ի Ն Ա Ս Տ Ա Ն

Ձրոյց կայ թէ վեց հարիւր
ասպատակներ նանկայ Բուսնի կը
յառաջանան, Ձինական զինուոր-
ներ զրկուեր են անոնց դէմ :
Սեպտ. 1ին Իէքինի մէջ, անգ-
լիական զեւսպանտան տուժե-
կատարուեր է զեւսպանտանց
պաշարման յիշատակարանի բա-
ցումը :

Ա Մ Ե Ր Ի Կ Ա

Պրֆալօի մէջ, ցուցահանդէ-
սին տունը հոգեհանգիստ կատար-
ուի հանդուցեալ Մակ-Քինլիի
համար :

— Միացեալ Նահանգներու
արտաքին գործոց նախարարը
չըջարեքականով մը օտար պի-
տութիւններուն յայտնեց է նա-
խագահին մահը և անոր օգնա-
կան Ռոզվելլիին նախագահական
պաշտօնն ստանձնելը :

— Մակ-Քինլի իր ամբողջ
հարստութիւնը որ բաւական խո-
շորկէկ գումարի մը կը հասնի
միայն իր կնոջը կտակեր է :

— Նիւ Եօրք Հէրըլտ լրագիրը
կիմանայ Ուաշինկթընէն թէ
ներկայ նախագահ Ռոզվելլը իր
բարեկամներէն մէկին յայտարա-
րած է որ որոշած է չընդունիլ
իր ընտրելիութիւնը՝ 1901ի նա-
խագահական ընտրութեան ա-
տեն :

— Անգլիոյ գահաժառանգ
ներկայ պիտի գտնուի Մակ-
Քինլիի թաղման հանդէսին :

— Մակ-Քինլիի վիճակէն վը-
տանգաւորութեան լուրը տա-
րածուելուն պէս՝ Չիքաքօի մէջ,
երեք հոգիի սոորազրութեամբ
անիշխանականներուն պէմ հե-
տեւեալ յայտարարութիւնը փակ-
ուած է պատերուն :

«Եթէ նախագահը կիրակի առ-
տուն մամը 10էն կանուխ մեռնի,
մենք կը խնդրենք մեր 10000
քաղաքացիները միանալ մեզի
հետ, յարձակիլ բանտին վրայ
ուր կը գտնուին անիշխանակա-
նեքը և զսնոնք ամէնքն ալ առ-
նել :

Ոստիկանութիւն ձերբակալուած
անիշխանականները ամէնքն ալ
աւելի ապահով բանտեր փոխադ-
րած է :

— Չիքաքօի ոստիկանապետը
յայտարարած է որ ինք ձերբա-

կալուած ամէն անիշխանակա-
նեքը պիտի պահէ, թէեւ անոնց
դաւակից ըլլալու փաստ մը չէ
գտած : Այդպէսով, երբ հաս-
տատուի թէ իսկապէս դաւադ-
րութիւն կայ եղեր, այլ ևս զա-
նոնք ձերբակալելու համար փնտ-
ռելու պէտքը չի մնար :

— Ալպերքերիի մէջ Լինչի օ-
րէնքի համաձայն ժողովուրդը
սպաններ է Մակկիօ անիշխանա-
կանը որ գուշակած էր Մաք-Քին-
լիի սպանումը : Պաշտօնապէս այդ
լուրը դեռ հաստատուած չէ :

— Չիքաքօի մէջ 500 հոգիէ
բաղկացած բազմութիւն մը,
գաւազաններով զինուած գոչել
են փողոցներէն անցնիլ և սկսեց
«մահ անիշխանականներուն»,
լինչի օրէնքով :

ՊԱՐՍՎԱՍՏԱՆ

Անգլիա, Պարսկաստանի հետ
պայմանագրութիւն մը պիտի
կնքէ երեք հեռագրական գիծեր
անցնելու Քաշանէն մինչեւ անգ-
լիական Պէլուստան :

Ֆ Ր Ա Ն Ս Ա

Չարին այցելութեանը պատ-
ճառով Պրանսա թուրքիոյ հետ
ունեցած բնօրհարումով կարծես
թէ առ այժմ չի զբաղիր, կա-
ռավարութիւնը և ժողովրդի մեծ
մասը հրճուանքի մէջ են սր Չա-
րը Պրանսա կուգայ : Իսկ ընկեր-
վարականները զժգոհ են :

Մակ-Քինլիին ուղանու թեան
փորձը մեծ իրաւանցում ձգեր է
Պրանսայի մէջ, ստիճանութիւնը
ամենախիստ միջոցներ ձեռք
կտանէ Չարին և Չարուհին կեան-
քը Պրանսայի մէջ ապահովելու
համար :

— Լիպր-Պարօլ ֆրանսական
թերթը կը հաղորդէ թէ՛ Բարիկ
հայկական պատգամաւորու-
թիւն մը, յիշատակագիր մը որ
բազմաթիւ սոորազրութիւններ
կը կրէ, ներկայացուցած Պ. Տէլ-
քասէի, Յիշատակագրին մէջ
մանրամասնօրէն նկարագրուած է
թիւրքիոյ հայերուն ծանր վի-
ճակը :

— Ոստիկանութիւնը իմացած
է եղեր որ Անվէրսէն անիշխանա-
կան մը կը պատրաստուի Պրան-
սա, Չարի ետեւէն երթալ. ու-
ղեր են բռնել, ձերբակալել,
օտկայն անիշխանականը արդէն
աներեւոյթացած է եղեր :

— Պ. Բիէր-Քիառ Պրանսայի
արտաքին գործոց նախարարին՝
Տէլքասէի յանձնեց է «Դրօշակ»
խմբագրութեան կողմէ ներկա-
յացուած Հայաստանի բարենո-
րոգմանց ծրագիր մը :

ԱՆԴՂԻԱ ԵՒ ՅՈՅՆԵՐԸ
Լոնտոնի, Աթէնքի և Ալէք-
սանտրիոյ յոյն տիկինները, ի-
րենց համակրանքը Լօրտ Քիչ-
ների յայտնած ըլլալու համար,
հանգանակութիւն մը բացեր են
անգլիական հիւանդ զինուորնե-
րուն և 200 արկղ զանազան ու-
տելիքներ զրկեր են թրանսփալ :
Քիչներ շնորհակալական նա-
մակ մը զրկեր է այդ տիկիննե-
րուն :

ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՅ ՌԻՍ. ՄԻՈՒԹԻՆ

Եւրոպայի Հայ. Ուս Միութեան
նամակ ուղարկելու և սոհասարակ
ամէն տեսակ գիտում ընելու համար
պէտք է գիտել հետեւեալ հասցէով
Իւգիսն sk Չէրիսիսու Արւ.
Լէօրոք րիւ սը Լէօլօ Տր Շիւի 2

Սուխ Ժընէզ
Կարգողի Յանձնաժողով

«Ժ Ա Մ Ա Ն Ա Կ»

Երկամեայ գրական, գիտական և
զեղարուեստական հանդէս՝
Խմբագրութեամբ Ս. Կ. Հախում-
եանի հրատարակուած է Ա. թիւը ճո-
խագոյն պարունակութեամբ և 88
էջերով, աստիկան բացնեցին է
25 ֆր. գիտել խմբագրին, 64. րիւ-
ֆլօտ-Պէրնար

Գ Ո Ւ Թ Ա Ն

Հանդիս ակտայ, հոյազորճակակ,
գիտական և արտեսագիտական
Հիմնադիր սնօրէն
Գարեգին Կ. Մեծսուրեան
Հրատարակուած է Դրոք թիւը,
շահեկան ըզանդակութեամբ,
Տարեկան բաժնեգիրն 12 ֆր. գի-
մել հիմնագրին, 23 rue de la Collegiale
PARIS

ԻՄԲԱԿՐՈՒԹԻՒՆ «ՆԻՐԺՆԻՍ»

Կը տպագրուին ամէն լեզուէ
այցեամբ, հասցեամբ, նամա-
կազուխ, հարանեկան հրաւի-
րագիր, մահազգ :

Գիները յոյժ գիւրամատչելի :
Ուրիշ քաղաքներէ եկած
յանձնարարութիւններ ճշդու-
թեամբ և փութով կը կատար-
ուին :

ՅՆՆՁՆՆՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԱՆԻՒՆԻ

ОТГОВОРНИКЪ:
Мурадъ-Ераносянъ

Печ. Взаимность — Варна